ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

„ԵՔ-ԳՀԾՁԲ-19/65" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյան, Մ. Սարգսյան, Ա. Մուրադյան, Մ. Մալխասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

---

Գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերը գնահատելու մասին
(Ս. Ներսիսյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝
- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.
-օրը՝ 10.04.2019թ., -ժամը՝ 15:30

1.1 Հիմք ընդունելով „Գնումների գործընթացի կազմակերպման մասին" ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտարարությունները համարվել են իրականությանը համապատասխանող, բացառությամբ՝ „Մինորա մշակութային կենտրոն" ՍՊԸ–ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 8000 /ութ հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 4, 14, 20, 21, 26-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված „Գնումների գործընթացի կազմակերպման մասին" կարգի 44-րդ կետով՝ որոշեց մերժել „Մինորա մշակութային կենտրոն" ՍՊԸ-ի հայտը 4, 14, 20, 21, 26-րդ չափաբաժինների մասով և 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել 4, 14, 20, 21-րդ չափաբաժինների մասով Մարինե Կույումջյան Միհրանի ԱՁ-ն:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց „Գնումների մասին" օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 26-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | տվյալները |
|---|---|---|
| 1 | Պրեստիժ լենդ ՍՊԸ | բավարար |
| 2 | ՊԵՅՑՈ ՍՊԸ | բավարար |
| 3 | ԱՁ Մարինե Կույումջյան Միհրանի | բավարար |
| 4 | Լույս Տորգ ՍՊԸ | բավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. ,Գնումների մասինե օրենքի պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց, որպես բավարար գնահատված հայտեր և ընտրված մասնակիցներ հայտարարել՝

2, 12, 25, 32-րդ չափաբաժինների մասով Պրեստիժ լենդ ՍՊԸ -ն,

10-րդ չափաբաժնի մասով ՊԵՑՑՈ ՍՊԸ-ն,

19, 27-րդ չափաբաժինների մասով Լույս Տորգ ՍՊԸ-ն,

22-րդ չափաբաժնի մասով Մինորա մշակութային կենտրոն ՍՊԸ-ն:

3, 4-7, 9, 11, 13, 14, 17, 18, 20, 21, 23, 24, 29, 31 չափաբաժինների մասով Մարինե Կույումջյան Միհրանի ԱՁ-ն

4. ,Գնումների մասինե օրենքի պահանջների համաձայն՝ հայտարարել անգործություն /5 օրացուցային օր/ և անգործության ավարտից հետո իրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր.

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

| | | |
|---|---|---|
| Անդամներ՝ | | Ս. Ներսիսյան |
| | | Ե. Մաթևոսյան |
| | | Մ. Սարգսյան |
| | | Ա. Մուրադյան |
| | | Մ. Մալխասյան |
| Քարտուղար՝ | | Ի. Եղիազարյան |